MyCar վիկտորինայի մասնակցության պայմաններ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն Armenian Auto Show 3.-ի շրջանակում (25.09.2026-27.09.026) կազմակերպում է եռօրյա վիկտորինա, որի յուրաքանչյուր օրվա հաղթողը կստանա խմբային ուղղաթիռային թռիչքի մասնակցության հնարավորություն:

1. Մասնակցության կարգը

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է սքանավորել համապատասխան QR կոդը, գրանցվել mycar.am-ում կամ մուտք գործել արդեն գոյություն ունեցող հաշիվ, և անցնել վիկտորինայի հղումով:

Վիկտորինան բաղկացած է 7 հարցից: Յուրաքանչյուր մասնակից տվյալ օրվա վիկտորինային կարող է մասնակցել միայն մեկ անգամ: Ընդհատելու դեպքում մասնակցությունը շարունակել կամ վերսկսել հնարավոր չէ:

2. Անցկացման ժամկետը

Մրցույթն անցկացվում է 3 օր շարունակ: Յուրաքանչյուր օրվա վիկտորինան հասանելի է ժամը 12:00-ից մինչև 19:30-ը:

3. Հաղթողի որոշման կարգը

Յուրաքանչյուր օրվա հաղթող է ճանաչվում առավելագույն թվով ճիշտ պատասխաններ տված և վիկտորինան ամենակարճ ժամանակում ավարտած մասնակիցը:

Ճիշտ պատասխանների քանակի և գրանցված ժամանակի համընկնման դեպքում առավելությունը տրվում է այն մասնակցին, որն առաջինն է ավարտել վիկտորինան:

4. Մրցանակը

Յուրաքանչյուր օրվա հաղթողը կստանա խմբային ուղղաթիռային թռիչքի մասնակցության հնարավորություն: Թռիչքի ամսաթիվը և կազմակերպչական մանրամասները կհամաձայնեցվեն հաղթողի հետ:

5. Արդյունքների հրապարակումը

Մրցույթի թափանցիկությունն ապահովելու նպատակով հրապարակվելու են մասնակիցների անունը, ազգանունը, ճիշտ պատասխանների քանակը և վիկտորինայի ավարտման ժամանակը:

Վիկտորինային մասնակցելով՝ մասնակիցը հաստատում է, որ ծանոթացել և համաձայն է սույն պայմաններին, ինչպես նաև նշված անձնական տվյալների մշակմանն ու հրապարակմանը:

6. Այլ պայմաններ

Կազմակերպիչն իրավունք ունի չեղարկելու մասնակցի արդյունքը՝ կանոնների խախտման կամ արդյունքների վրա անօրինական ազդեցության հաստատված դեպքերում: